ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/48

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից 29.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/48 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն ((այսուհետ նաև՝ Բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 29.03.2018թ. բողոքով հայտնել է, որ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից քիմիական նյութերի, լաբորատոր ապրանքների ու սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը հայտարարվել է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 28/ԱԾ որոշմամբ:

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը
5	33691167	Կապիլյարներ		Ապակյա ձողեր	տուփ
7	33691167	Վակուումային փորձանոթներ կարմիր (մարդու արյուն վերցնելու համար)		5 մլ ԷԴՏԱ-այով, Դելտա ՍՊԸ	տուփ
8	33691166	Միջավայր Helicobacter pilori-ի աճեցման համար		Միջավայր Helicobacter pilori-ի աճեցման համար,	կգ
10	42910000	Ջրի թորման սարք		10 լ/ժամ, 2,5 մկ Սմ/ՍՄ, բակով , Արտադրող՝ Լիստոն Տեխնիկական նկարագրություններ տարանջատում, մկՍմ/սմ — 2,5; արտադրողականություն , լ / ժամ — 10; ջրի օգտագործում, լ / ժամ — 150; չժանգոտվող պողպատից AISI 321; արտաքին կորպուսը պատված է սանիտարական մշակման նկատմամբ կայուն էպօքսիդային փոշենման ծածկույթով, աշխատանքային ռեժիմի ավտոմատ ապահովում ցանցային աղբյուրի միացումից հետո: ջրի անհրաժեշտ մակարդակի ապահովում; խողովակաձև էլեկտրատաքացուցիչների (ՏԷՀ) էլեկտրոնային պաշտպանություն; գոլորշաչափիչի հեշտ հասանելիություն նոտվածքի մաքրման համար; առանց բաք-կուտակիչի; հզորություն, կՎտ — 7,5; եզրաչափը, ԲxԼxԵ, մմ — 550×370×410; քաշ առանց/ փաթեթավորմամբ, կգ — 17,5 / 19.)	հատ
13	33691167	Վակուումային փորձանոթներ սպիտակ (մարդու արյուն վերցնելու համար)		3,5 մլ- դատարկ, Դելտա ՍՊԸ	տուփ
14	33691163	Արյունային ագարի		Արտադրող՝ BioLab,	կգ

		հիմք			
15	33691167	Լիոֆիլիզատոր SubliMate FDL-2S8		2 կգ, մինչև -55 °C Արտադրող: Esco Ապրանքատեսակ : 7840250 Տեխնիկական նկարագրություններ Տարողությունը ըստ սառույցի, կգ — 2,0; Արտադրողականությունը ըստ ջրի , լ/օր— 3,5; Լուսահավաքի ջերմաստիճան, °C — -55; Մոդելի տիպը՝ սեղանի Լուսահավաք չժանգոտվող պողպատից; LusterClear համակարգ IceOut հալեցման համակարգ Հաշվարկ, ընդհատություն — 0,001 մբար; եզրաչափ, LxPxh, մմ — 400×500×395; եզրաչափը փաթեթավորմամբ, LxPxh, մմ — 495×573×465; Քաշը, կգ — 36. Պարագաներ: Ակրիլային խցիկ տափակ կափարիչով; Մինի-դարակ նախնական սառեցման համար; Կափարիչ մինի-դարակի համար; դարակներ FDL-2S8, FDL-5S8 և FDL-5L8-ի համար, 4 հատ; անիվներով տակդիր արգելակներով. Առաջարկվող վակուումային պոմպ: RV5, քաշման արագություն (ռուս.՝скорость откачки) 5,8 մ3/ժ, սահմանային վակուում 0,002 մբար, Edwards. Պարագաներ պոմպի համար յուղային ֆիլտր (ռուս.՝фильтр масляного тумана) EMF10; սիլիկոնային խողովակ NW25 (250մմ, 500մմ, 750 մմ, 1000 մմ, 1500 մմ; սիլֆոնային խողովակ NW16 (500 մմ, 1000 մմ); յուղ Ultragrade վակուումային պոմպի համար- 19, 1 լ; վակուումային քսուք Apiezon	հատ
26	15872400	Կերակրի աղ/ քիմիապես մաքուր/ NaCl		Սպիտակ գույնի, անհոտ, ինքնահոս բյուրեղային փոշի է: Հրա և պայթունավտանգ չէ:Չվնասված մաշկին ընկնելուց երկարաձգում է դրանց լվացման գործընթացը: Անհրաժեշտ է հողերի լաբորատոր հետազոտությունների համար	կգ

Բողոքաբերը նշել է, որ www.gnumner.am և www.armeps.am համացանցային պաշտոնական կայքերում հրապարակվել է Ընթացակարգի հրավերը, որի համաձայն՝ հայտերի բացման նիստը պետք է տեղի ունենա 2018թ. մարտի 30-ին ժամը 10:30-ին:

Բողոքաբերի կողմից որպես բողոքի իրավական հիմքեր նշվել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Բողոքաբերը հայտնել է, որ Պատվիրատուն «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով ընթացակարգի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով թիվ 5-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 26-րդ չափաբաժինների մասով գնման առարկայի բնութագրերը նկարագրելիս

և դրա հատկանիշները սահմանելիս պահանջ և հղում է կատարել կոնկրետ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, կոնկրետ աղբյուրին և արտադրողին:

Բողոքաբերը հայտնել է, որ Պատվիրատուն կոնկրետ հղումներ օգտագործելու դեպքում պետք է սահմաներ «կամ համարժեք» բառերը, որը ընդհանրապես բացակայում է Տեխնիկական բնութագրերում:

Բողոքաբերը հայտնել է, որ, Պատվիրատուն ոչ միայն չի սահմանել «կամ համարժեք» բառերը, այլ նաև որոշ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի մեջ գրել է սույն գնման ընթացակարգի ենթադրյալ մասնակիցների անվանումները կամ տվյալ ապրանքատեսակների մասով կոնկրետ արտադրողին, ինչը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Բողոքաբերը նշել է, որ վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ քիմիական նյութերի, լաբորատոր ապրանքների ու սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերում նման տեխնիկական բնութագրեր սահմանելով Պատվիրատուն մրցակցության հավասար պայմաններ չի ապահովել հնարավոր մասնակիցների համար, ինչպես նաև նման բնութագրերը հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով՝կատարվում է տվյալ գնումը:

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն ներկայացված բողոքով խորհրդին խնդրել է՝

պարտավորեցնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից քիմիական նյութերի, լաբորատոր ապրանքների ու սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխելու Ընթացակարգի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրերը՝ թիվ 5-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 26-րդ

չափաբաժինների մասով և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 03.04.2018թ. ժամը 11:45-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամը Խորհրդին ուղղված 03.04.2018թ. թիվ 41/01-05-509 գրությամբ հայտնել է, որ Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից 29.03.2018թ. ներկայացված բողոքը քննարկվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի գնումների և նյութատեխնիկական մատակարարման բաժնում:

Պատվիրատուն հայտնել է, որ Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամը ընդունում է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 5-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 26-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում տեղ գտած ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների անհամապատասխանությունը և տվյալ չափաբաժինների մասով չեղարկում է գնման գործընթացը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագրերը պատրաստելուց հետո կհայտարարվի նոր մրցույթ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 03.04.2018թ. ժամը 11:45-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կողմից Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կարիքների համար՝ քիմիական նյութերի և լաբորատոր ապրանքների ու սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2 » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով թիվ 5-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 26-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է գնման ենթակա ապրանքների հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հավելված N 1
« » 2018թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափ-ման միավորը
5	33691167	Կապիլյարներ	Ապակյա ձողեր	տուփ
7	33691167	Վակուումային փորձանոթներ կարմիր (մարդու արյուն վերցնելու համար)	5 մլ ԷԴՏԱ-այով, Դելտա ՍՊԸ	տուփ
8	33691166	Միջավայր Helicobacter pilori-ի աճեցման համար	Միջավայր Helicobacter pilori-ի աճեցման համար,	կգ
10	42910000	Ջրի թորման սարք	10 լ/ժամ, 2,5 մկ Սմ/ՍՄ, բակով , Արտադրող՝ Լիստոն Տեխնիկական նկարագրություններ	հատ

			տարանջատում, մկՍմ/սմ — 2,5; արտադրողականություն , լ / ժամ — 10; ջրի օգտագործում, լ / ժամ — 150; չժանգոտվող պողպատից AISI 321; արտաքին կորպուսը պատված է սանիտարական մշակման նկատմամբ կայուն էպօքսիդային փոշեներկման ծածկույթով, աշխատանքային ռեժիմի ավտոմատ ապահովում ցանցային աղբյուրի միացումից հետո: ջրի անհրաժեշտ մակարդակի ապահովում; խողովակաձև էլեկտրատաքացուցիչների (ՏԷՀ) էլեկտրոնային պաշտպանություն; գոլորշաչափիչի հեշտ հասանելիություն նոտվածքի մաքրման համար; առանց բաք-կուտակիչի; հզորություն, կՎտ — 7,5; եզրաչափը, ԲxLxե, մմ — 550×370×410; քաշ առանց/ փաթեթավորմամբ, կգ — 17,5 / 19.)	
13	33691167	Վակուումային փորձանոթներ սպիտակ (մարդու արյուն վերցնելու համար)	3,5 մլ- դատարկ, Դելտա ՍՊԸ	տուփ
14	33691163	Արյունային ագարի հիմք	Արտադրող՝ BioLab,	կգ
15	33691167	Լիոֆիլիզատոր SubliMate FDL-2S8	2 կգ, մինչև -55 °C Արտադրող: Esco Ապրանքատեսակ : 7840250 Տեխնիկական նկարագրություններ Տարողությունը ըստ սառույցի, կգ — 2,0; Արտադրողականությունը ըստ ջրի , լ/օր— 3,5; Լուսահավաքի ջերմաստիճան, °C — -55; Մոդելի տիպը՝ սեղանի Լուսահավաք չժանգոտվող պողպատից; LusterClear համակարգ IceOut հալեցման համակարգ Հաշվարկ, ընդհատություն — 0,001 մբար; եզրաչափ, LxԲxh, մմ — 400×500×395; եզրաչափը փաթեթավորմամբ, LxԲxh, մմ — 495×573×465; Քաշը, կգ — 36. Պարագաներ: Ակրիլային խցիկ տափակ կափարիչով; Մինի-դարակ նախնական սառեցման համար; Կափարիչ մինի-դարակի համար; դարակներ FDL-2S8, FDL-5S8 և FDL-5L8-ի համար, 4 հատ; անիվներով տակդիր արգելակներով. Առաջարկվող վակուումային պոմպ: RV5, քաշման արագություն (ռուս.՝скорость откачки) 5,8 մ3/ժ, սահմանային վակուում 0,002 մբար, Edwards. Պարագաներ պոմպի համար յուղային ֆիլտր (ռուս.՝фильтр масляного тумана) EMF10; սիլգոնային խողովակ NW25 (250մմ, 500մմ, 750 մմ, 1000 մմ, 1500 մմ; սիլֆոնային խողովակ NW16 (500 մմ, 1000 մմ); յուղ Ultragrade վակուումային պոմպի համար- 19, 1 լ; վակուումային քսուք Apiezon	հատ
26	15872400	Կերակրի աղ/	Սպիտակ գույնի, անհոտ, ինքնահոս	կգ

		քիմիապես մաքուր/ NaCl	բյուրեղային փոշի է: Հրա և պայթունավտանգ չէ:Զվնասված մաշկին ընկնելուց երկարաձգում է դրանց լվացման գործընթացը: Անհրաժեշտ է հողերի լաբորատոր հետազոտությունների համար	

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի 29.03.2018թ. բողոքը, Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի 03.04.2018թ. թիվ 41/01-05-509 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողական կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կողմից Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կարիքների համար քիմիական նյութերի և լաբորատոր ապրանքների ու սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2 » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ն բողոքով հայտնել է, որ Պատվիրատուն «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով ընթացակարգի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով թիվ 5-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 26-րդ չափաբաժինների մասով գնման առարկայի

բնութագրերը նկարագրելիս և դրա հատկանիշները սահմանելիս պահանջ և հղում է կատարել կոնկրետ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, կոնկրետ աղբյուրին և արտադրողին:

Խորհուրդն արձանագրում է, որ Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամը Խորհրդին ուղղված 03.04.2018թ. թիվ 41/01-05-509 գրությամբ և 03.04.2018թ. ժամը 11:45-ին ԳԲԽ-ԱՄ-2018/48 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ հայտնել է, որ Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամը ընդունում է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 5-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 26-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում տեղ գտած անհամապատասխանությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Այսպես՝ «Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: ***Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:***

Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ Տեխնիկական բնութագրի մեջ թիվ 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով Պատվիրատուն գնման առարկայի բնութագրերը սահմանելիս հղում է կատարել ֆիրմային անվանմանը, կոնկրետ աղբյուրին և արտադրողին և չի նշել «կամ համարժեք» բառերը, հետևաբար սույն մասով Խորհուրդը գտնում է, որ Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ Տեխնիկական բնութագրի թիվ 5-րդ և 26-րդ չափաբաժինների մասով գնման առարկայի բնութագրերում ևս առկա է հղում կոնկրետ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, կոնկրետ աղբյուրին և արտադրողին, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ նշված չափաբաժիններով առկա չէ որևէ հղում Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ

աղբյուրին կամ արտադրողին, այլ ընդամենը սահմանվել են գնման առարկայի այն ընդհանուր տեխնիկական հատկանիշները, որոնցով օժտված առարկան, ըստ Պատվիրատուի, համարվում է իր կարիքին համարժեք, ուստի Խորհուրդը գտնում է, որ սույն մասով բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ռաֆայել Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.03.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի կողմից քիմիական նյութերի և լաբորատոր ապրանքների ու սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխելու Ընթացակարգի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից թիվ 1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրերը՝ թիվ 7, 8, 13, 14 և 15-րդ չափաբաժինների մասով և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2. Բողոքի պահանջը՝ «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/5-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխելու Ընթացակարգի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից թիվ 1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրերը՝ թիվ 5-րդ և 26-րդ չափաբաժինների մասով և այն համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**